

պերը, մինչ հսկայ բարձունքները պարզ կը մնան¹:

Համշէնի ձորերը թէեւ ծով կ'իջնան, բայց մեծ մասը ծովափէն 1—2 ժամ հեռաւորութեամբ կը դադրին. իսկ գլխաւոր հովիտները կ'երթան դէպի այժմ Փուրթունա կոչուած գետը (Furtuna, հին Por-danis), ուր ի վերջոյ կը հաւաքուին բոլոր ջրերը, իսկ ասի ծով կը թափի Աթինայի արեւելակողմը: Այստեղ հայանուն գիւղը Արտաշէն (Կ. Artashen, քոխ՝ Artaschin), որուն մօտ կը նշանակէ Կիպերտ Armene հրուանդանը, կը ցուցնէ այն ամէնէն արեւելեան կէտը, ուր Համշէնցի հայր ծովափ իջած էր: Ընդհանուր առմամբ սակայն Աթինա Լազերու հող է. իսկ վերը՝ Խալայի շրջանը Համշէնի կը վերաբերի. անկէ արեւելք՝ տիրող են Լազերը, որոնք կանուխէն մահմետականացած՝ կրցած են պահել իրենց ազգային ինքնուրոյնութիւնը եւ գոնէ խորին գիւղերը՝ նաեւ լեզուն: Այսպիսի դժուարամուտ լեռանց մէջ գիւրին էր իշխանաց կէս-անկախ գոյութիւն մը պահել: Նաեւ Օսմանեան տիրապետու-

¹ Հմմտ. Բ-ի, էջ 18, 32—38, 100—110 եւն: